


ՀՈՒՇ-ՑԵՐԵԿՈՒՅԹ՝ ՆՎԻՐՎԱԾ ԱՊՐԻԼՅԱՆ ՔԱՌՕՐՅԱ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԶՈՂԵՐԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ



անմիջապես մեկնեց առաջնագիծ, նրանց թվում էին նաև Հայաստանից ու սփյուռքից Արցախ շտապող կամավորականները»,- ասել է նա՝ ընդգծելով, որ պատերազմի ընթացքում տղաները առանց վարանելու նետվել են դեպի սահման՝ պաշտպանելու երկրի անկախությունը: Այդպես եղել էր արցախյան պատերազմի ընթացքում և այդպես եղավ 2016թ.:

Իրենց ելույթներում ուսանողները գնահատել են նահատակների սխրամքը՝ նախնիներից ավանդ ստացած հայրենի հողը պաշտպանելու սուրբ գործը:

Ապրիլի 2-ին ԱրՊՀ-ում բնագիտական ֆակուլտետի նախաձեռնությամբ կազմակերպվել է ապրիլյան պատերազմի զոհերի հիշատակին նվիրված հուշ-ցերեկույթ, որի ընթացքում ուսանողները ասմունքել են, հանդես եկել ելույթներով, հայրենիքին, զինվորին նվիրված պարային, երաժշտական կատարումներով:



ԱրՊՀ ՈՒՇՀՅՏԱ գծով պրոռեկտոր Վիտյա Յարամիշյանը, արժևորելով հայրենիքի պաշտպանների ազգամվեր գործը, մասնավորապես ասել է, որ քանի դեռ դարաբաղյան հակամարտությունը կարգավորված չէ, ուստի վտանգը մեծ է, որ կրկին կարող է բռնկվել պատերազմի կրակը: «Երբ ապրիլյան պատերազմի լուրը տարածվեց, ընդամենը մի քանի ժամերի ընթացքում մեր համալրող անձնակազմը

ԿԱԶՄԱԿԵՐՊՎԵԼ ԵՆ ԱՍՏՎԱԾԱՇՆՉՅԱՆ ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ

ԱրՊՀ բանասիրական ֆակուլտետի ռուսաց լեզվի և գրականության ամբիոնի դասախոս, մ.գ.թ., դոցենտ Սուսաննա Սկրտչյանը կազմակերպել է աստվածաշնչյան ընթերցումներ: Միջոցառման ընթացքում ուսանողներն իրենց ելույթներում հատկապես ընդգծել են մարդկային, բարոյական արժեքներին վերաբերող սաղմոսները: Ընթերցանության նպատակը հոգևոր դաստիարակությունն է, ուսանողներին քրիստոնեական իմաստությանը հաղորդակից դարձնելը:



Ուսանողներից Ազնեսա Պողոսյանը կարևորել է հոգևոր նշանակության միջոցառումների կազմա-

կերպումը, որոնք մեծ դեր ունեն ուսանողներին քրիստոնեական գաղափարախոսությամբ դաստիարակելու համար:



«Քո ժամանակը»

ԱՐՑԱԽԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԱՍՍԱԹԵՐԹ

Խմբագիր՝ Զ.ՍԱՌԱԶՅԱՆ
Համարի պատասխանատու՝ Աննա Պետրոսյան
Լրագրություն՝ 3-րդ կուրս
Մեր հասցեն՝ Մ.Գոշի 5:
Հեռ.՝ (047) 94 04 91

Տպաքանակ՝ 400
Տպագրվում է Արցախի պետական համալսարանի հրատարակչության տպարանում



Ուզո՞ւմ ես գուշակել, տեսնել մի ժողովրդի ապագան՝ նայի՛ր նրա երիտասարդությանը: ԳԱՐԵԳԻՆ ՆԺԴԵՂ

Քո ժամանակը

№ 3 ԱՊՐԻԼ 2019

ԱՐՑԱԽԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԱՍՍԱԹԵՐԹ

ԱՐՊՀ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ ՀԱՐԳԵԼ ԵՆ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԶՈՂԵՐԻ ՀԻՇԱՏԱԿԸ

Ապրիլի 23-ի երեկոյան Ստեփանակերտում տեղի է ունեցել ջահերթ և մոմավառություն՝ ի հիշատակ 1915 թ. հայոց ցեղասպանության անմեղ զոհերի: Զահերթը մեկնարկել է Ստեփանակերտի Սուրբ Հակոբ եկեղեցու բակից դեպի հուշահամալիր: «ՀԱՎԱՔԱԿԱՆ ՊԱՅՔԱՐ ՀԱՆՈՒՆ ՀԱՅ ԴԱՏԻ» կարգախոսով երթին մասնակցել են նաև ԱրՊՀ ուսանողներ:



Իսկ ապրիլի 24-ին ԱրՊՀ վարչական շենքի բակից համալսարանականները շարժվել են դեպի Ստեփանակերտի հուշահամալիր, հարգանքի տուրք մատուցել 1915 թ. հայոց ցեղասպանության անմեղ զոհերի հիշատակին:

1, 5 Մ Ի Լ Ի Ո Ն և 1 9 1 5 Թ Ի Վ



Չէի՞ք տեսնում, որ ազգ էր վերանում, Ազգ էին սպանում, բնաջինջ անում:

Ու՞ր էիր, Աստված ամենակարող, Դու՞ էլ լքեցիր հային ոտնակոխ, Թողեցիր ազգիս օտար ճիրանում, Սոված ու ծարավ, բորիկ ու անտուն:

Մինչ փոքրիկ մանչը՝ արցունքն աչքերին, Ծնողներին էր փնտրում վաղամեռ, Այսպես կործանվեց հրաշք ընտանիք, Իսկ ազգս մնաց ունայն, անտանիք: Հայի շուրթերին աղոթքն էր սառած,

Իսկ Արարատը՝ վաղուց խորշոմած, Նա էլ էր զգում կարծես ցավը այս, Արցունք էր հորդում Արաքսին խառնած:

15 թվական, Հայոց Մեծ Եղեռն, Հայի արյունը չեն հատուցել դեռ, 104-ամյա չսպիացած վերք, Հայ ազգի սրտում մնաց մի խոր հետք, Մեկ ու կես միլիոն հայ նահատակված, Դարձաք անմոռուկ կրծքիս ամրացված:

Այս մի բուռ հողը արյունով ներկվեց, Կրկին մոլեգնեց քամին ահարկու, Հայի աչքերը ավազով լցվեց, Դադարեց հնչել զանգը վանքերի: Ազգս մատնված էր ոչնչանալու. Չկար օգնություն, չկար ձեռք մեկնող, Խավար էր, չկար լույսի մի մշույլ, Հայի ցավերին չկար դարմանող: Արևն էր մարել կարծես հավիտյան, Մի մայրամուտ էր, որ չուներ եզերք, Կործանված ներկա, անհույս ապագա, Ինչպե՞ս պայքարե՛ր հայ ազգը, ասե՛ք: Ու՞ր էիք հապա աշխարհի մեծեր, Չէի՞ք նկատում Եղեռնը Հայոց,

Լիանա ՄՈՎՍԵՍՅԱՆ
Հայոց լեզու և գրականություն
1-ին կուրսի

Կ Ո Մ Ի Տ Ա Ս - 1 5 0 Հ Ա Յ Ե Ր Գ Ի Մ Ե Ս Ր Ո Պ Մ Ա Շ Տ Ո Ց Ը

Ակնածանքով խոնարհվում եմ Կոմիտասի մեծության ու նրա հայրենանվեր գործի առջև:

Աստվածը նորյալ հանճարը եղավ ազգային կոմպոզիտորական դպրոցի հիմնադիրը, երաժշտական ազգագրության ռահվիրաներից մեկը: Նա և՛ երգիչ էր, և՛ երգահան, և՛ երաժիշտ-բանահավաք, և՛ մանկավարժ, և՛ խմբավար:

Կոմիտաս վարդապետը ժողովրդի պատմության ու հոգեբանության խորիմացությամբ, ազգագրագետի վարպետությամբ, գեղագետի պահանջկոտությամբ, գիտնականի վերլուծական մոտեցմամբ հավաքեց, համակարգեց ու մշակեց հազարավոր ժողովրդական երգեր: Դրանց թվում կային թե՛ հեթանոսական շրջանի, թե՛ հոգևոր, թե՛ գեղջկական կենցաղին, թե՛ պանդխտությանը վերաբերող երգեր:

«Կռունկ, ուստի՞ կուգաս...», - մորմոքում է պանդուխտը, հայրենիքի և յուրայինների կարոտը սրտում, դեգերում օտար ափերում:

Աստանդականի տոչոր հոգին տենչում է իր բնօրրանը, տոհմածառի մեծ ու փոքր ճյուղերի տեսությանն արժանանալը: Ո՞վ կարող է լուր բերել իր աշխարհից, եթե ոչ կռունկը: Ու կռունկը դառնում է պանդխտության երգի հիմնական կերպար: Տեսնես՝ կա՞ ավելի սրտակեղեք երգ, որում կսկիծն այդքան խորը, թախիծն այդպես պայծառ լինի:

Հայ երգի Մեսրոպ Մաշտոցը ամբողջ կյանքում արարել է ժողովրդի համար ու սովորել նրանից: Եվ բյուրեղացրել էր ժողովրդի հոգու մեղեդիները, հղկել ու աղամանդի տեսքով վերադարձրել «հող ու ծաղիկ տվողին»՝ իր հանճարեղ ժողովրդին ու ողջ մարդկությանը: Նա, թրի դեմ գրիչ դնելով, փրկել է ազգային մեղեդին մուղամների ճիրաններից: Նրա ծառայությունը ոչ միայն համազգային, այլև համամարդկային նշանակություն ունի:

Կոմիտաս գիտնականը նպատակ ուներ աշխարհին ներկայացնել հայկական երաժշտական հարուստ մշակույթի ավանդույթները և ապացուցել, որ «հայն ունի ինքնուրույն երաժշտություն»:

Ազատությունը քաղցր ու տենչալի է ամենքի համար: Ազատության եմ ձգտում անգամ վանդակված զազանները, բարուրված երեխան, բանտված հույզերը: Մարդն ազատ պիտի լինի և՛ հոգեպես, և՛ ֆիզիկապես: Եվ ինչպես ջուրը չի



կարելի բանտել, այնպես էլ՝ Կոմիտասին ու ազատությունը...

Պոլսի ատելության մթնոլորտը և հայերի զանգվածային կոտորածների մասին լուրերը շարունակում են խաթարել նրա զգայուն հոգեկան վիճակը, և նրան տեղափոխում են հոգեբուժարան:

... Ու հիմա, ասես, լսում եմ նրա հառաչանքները, տեսնում եմ ցավից զալարվող մարմինը, խոնավ ու մութ սենյակի պատերը ճանկող մաշված մատները... Ու հասկանում... Մեծ հայը գիտեր, որ շուտով մեկնելու է այնտեղ, ուր երազն ու իրականությունը միաձուլված են, ուր չկա չարիք: Գիտեր ու չէր սարսափում այդ մտքից, չէր զարմանում, որ Արարիչն իր մոտ է կանչում: Գիտեր, որ ինքն անմահ է թե՛ երկնքում, թե՛ երկրի վրա:

Այսօր էլ հայ երգարվեստը ասես նահանջ է ապրում. պետք է շարունակել կոմիտասյան սուրբ գործը, խորամուխ լինել ժողովրդական երգերի գեղագիտական նշանակության, հանրային, կոմպոզիցիոն արժեքների բացահայտման մեջ:

Ժողովրդական երգը եղել և մնում է հասարակ մարդու հոգու վճիտ հայելին, սրտի հարազատ արծազանքը:

Թող երիցս օրհնվեն կոմիտասյան մեղեդիները, որոնք աստվածային են, վեհացնող...

Մերի ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Լրագրություն, 3-րդ կուրս

«ՍՈՎՈՐՈՒՄ ԵՄ, ՈՐ ԱՊԱԳԱՆ ԴԱՐՁՆԵՄ ԱՌԱՎԵԼ ԼՈՒՍԱՎՈՐ»



Մասնագիտությունը ընտրելը ոչ միայն ապագայի հեռանկարն է, այլ նաև խառնվածքի բ ն ո թ ո շ ո ղ հատկանիշներից մեկը: Իմ գրուցակիցն այս անգամ մայր բուհի մաթեմատիկա, համակարգչային գիտությունների մասնագիտության

4-րդ կուրսի ուսանողուհի Լիանա Ղալայանն է:

Փոքրամարմին այս աղջնակն ի սկզբանե հակում ուներ ստեղծագործելու հանդեպ, ասմունքում ու անչափ սիրում էր մայրենի լեզուն ու գրականությունը: Բայց մասնագիտական ընտրության շնորհիվ՝ ուսանողական կյանքում նա գտավ իր յուրօրինակ մասնագիտական մաթեմատիկական բանաձևը:

- Լիանա, նախ ինչն՞վ էր պայմանավորված այս կտրուկ շրջադարձային անցումը: Զգացմունքային, ստեղծագործող «ապագա» բանասերն իրեն վերագտավ հանրահաշվական «լաբիրինթոսում»:

-Այո, ճիշտ եք: Ստեղծագործում եմ մանկուց: Բանաստեղծությունը, գրական յուրաքանչյուր ստեղծագործություն ասես իմ մի մասնիկն է: Յուրաքանչյուր գրողի, գրական հերոսի հետ վերապրում եմ մարդկային ծանոթ իրավիճակներն ու հույզերը: Շատ եմ սիրում ընթերցել: Գրքի ամեն մի տողը, վանկը ինձ համար նոր հոգեվիճակ է: Այս զգացմունքայինությունից անցումը մաթեմատիկական ճշգրտության, մի փոքր դժվար էր, եւթյամբ, ասում եմ, շատ նուրբ եմ, ինչն էլ հենց օգնեց ինձ:

-Եվ այս ամենով հանդերձ, քո զգացմունքային աշխարհը, որից դու ոգեշնչվում ես, ինչպե՞ս արձագանքեց դրան:

-Հաշվարկը, բանաձևը, մաթեմատիկական վերլուծությունները, կոորդինատները ևս մի փոքրիկ ստեղծագործություն են: Մտքիդ թռիչք ես տալիս՝ լուծմանը հասնելու համար: Բանաստեղծության մեջ ծնվում են տողեր, հույզերն ամփոփում են միտքը: Իսկ այստեղ՝ ճիշտ տրամաբանությամբ տեսանելի է եզրագիծն ու ավարտը: Երբեմն նույնիսկ մաթեմատիկական և զգացմունքային տրամաբանությամբ մարդուն հասանելի են դառնում շատ ու շատ խնդրի լուծումներ:

-Նշեցիր նաև ընթերցասեր լինելու հանգամանքը:

Գրական ստեղծագործությունները, ի համեմատ հանրահաշվական պատկերների, բոլորովին այլ են: Քո ընթերցածում ի՞նչն ես հասցրել կարևորել ու սկզբունքայնորեն հարազատ համարել քեզ:

-Շատ եմ սիրում մեր գրողների արձակ գործերը՝ Բաֆֆու «Կայծեր»-ը: Միևնույն ժամանակ նա մշտապես շեշտադրում է կրթության կարևորությունը: Բաֆֆին կարևորել է նաև կանանց կրթությունը: Հենց նա է, որ կայծեր է լցնում ժողովրդի մեջ, որոնք հետո պետք է կրակ դառնան: Դժվար է ասել՝ կլինի այդպես, թե՛ ոչ: Բայց վստահ եմ, որ դա երկրի փրկության միակ ուղին է:

-Ինչպե՞ս կտարանջատես մաթեմատիկան՝ այլ գիտություններից:

-Տեղին է ասված, որ յուրաքանչյուր բնական գիտություն պարունակում է այնքան ճշմարտություն, որքան նրանում մաթեմատիկա կա:

-Ի՞նչ գիտությունների հետ այն ունի սերտ կապ: Եթե զուգահեռներ, ասենք, մաթեմատիկան ու գրականությունը: Ի՞նչ է տեսանելի:

-Յուրաքանչյուր գիտության հիմքում ընկած է հաշվարկը՝ թվային, թե՛ բառային: Նախ մաթեմատիկան կարգավորում է մեր միտքն ու լարում տրամաբանությունը: Եվ երկրորդ, հնարավոր չէ լինել իսկական մաթեմատիկոս՝ չլինելով մի քիչ պոետ:

-Ուսանողական կյանքը՝ արտահայտված քո մաթեմատիկական բանաձևով: Ինչպիսի՞ն է այն:

- Ուսանողական տարիները կյանքի լավագույն լուսավոր տարիներն են: Ես ինձ համար բանաձևել եմ այդ տարիներին ձեռք բերած ուսանողին հարիր բոլոր կանոնները: Ինձ համար ներբուհական առօրյան մի գունավոր աշխարհ է, որտեղ կան այն բոլոր երանգները, որոնք անհրաժեշտ են ուսումնաստենչ ուսանողին: Եվ այդ գույնն ինձ համար երփներանգն է:

-Այսպիսի մի կարծրատիպ կա, որ մաթեմատիկոսները երբեմն հեռանում են իրական աշխարհից: Այդ սահմանը դուք հաճախ եք հատում:

-Այո, կա նման «երևույթ»: Ինձ թվում է՝ դա վերացական, կոդավորված ինչ-որ տարածք է: Մասնագիտական խորացման առումով երբեմն արժե հատել այդ սահմանը՝ թեկուզ ինքդ քեզ համար փոփոխություն ապրելու: Միզուցե և մի փոքր անցել եմ...

-Չեսաքրքիր է, ի՞նչ կարգախոս ունես դու:

-Մենք՝ բոլոր ուսանողներս, որպես վաղվա օրվա կերտողներ, պետք է առաջնորդվենք մեկ միասնական սկզբունքով. «Սովորում եմ, որ ապագան դարձնեմ առավել լուսավոր»:

Հարցազրույցը՝ Անահիտ ՀԱՎՈՐՅԱՆ

ԳԻՏԱԿԱՆ ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏՈՒՄ

Ապրիլի 16-ին տնտեսագիտության տեսության և կառավարման ամբիոնի վարիչ, տ.գ.թ., դոցենտ Իրինա Իշխանյանի նախաձեռնությամբ կազմակերպվել են ուսանողական գիտական ընթերցումներ՝ «Սովերային տնտեսություն» թեմայով:



Ողջունելով ներկաներին՝ կազմակերպիչը կարևորել է ուսանողների ինքնուրույն հետազոտությունները՝ նշելով, որ հետազոտող խմբի ուսանողները աննախադեպ ակտիվություն են ցուցաբերել միջոցառմանը նախապատրաստվելիս:

Չամաշխարհային տնտեսություն և միջազգային տնտեսական հարաբերություններ դասընթացի շրջանակներում կազմակերպված միջոցառմանը մասնակցում էին ֆինանսներ բաժնի երրորդ կուրսի ուսանողները, ովքեր ներկայացրեցին սովերային տնտեսության ոչ միայն տեսական դրույթները, այլև համաձայն թեմայով իրենց կողմից իրականացված սոցիալաբանության արդյունքները:

Սովերային տնտեսության էությանը, տեսակներին, խթանող և զսպող գործոններին, հետևանքներին, ինչպես նաև դրա մակարդակի գնահատման միկրո և մակրո մի շարք մեթոդների անդրադառնալուց հետո ուսանողները մանրամասն ներկայացրել են հարցման արդյունքների հիման վրա մշակված սեփական եզրակացությունները:

Ուսանողների հետազոտական ինքնուրույնության վերաբերյալ գնահատման խոսք են ասել ֆակուլտետի ղեկավարն ու ՈւՇՀՀՏԱ գծով պրոռեկտորը: «Ֆակուլտետում առկա ուսանողական գիտահետազոտական ներուժը աշխատաշուկայի պահանջները լիարժեք բավարարող մասնագետների թողարկման հիմքեր է տալիս», - նշել է ղեկավարը: Մասնագետները՝ հորդորելով ուսումնագիտական աշխատանքները շարունակել նույն տեմայերով:

ՀԱՆԴԻՊՈՒՄ «ԴԱՍԱՎԱՆԴԻՐ, ՀԱՅԱՍՏԱՆ» ԾՐԱԳՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐԻ ՀԵՏ



Ապրիլի 11-ին ԱրՊՀ-ում կայացավ հանդիպում «Դասավանդի, Հայաստան» կրթական հիմնադրամի պատասխանատուների հետ, որի ընթացքում պատասխանատուները ներկայացրել են հիմնադրամի կողմից իրականացվող ծրագրերը և հանդես եկել թիմը ԱրՊՀ շրջանավարտներով համալրելու առաջարկությամբ:

առաջնորդության ծրագրի էության մասին:

Նպատակ ունենալով սոցիալական փոփոխությունների արդյունքում ապահովելու հավասար պայմաններով կրթական միջավայր՝ հիմնադրամի թիմը հավաքագրում է շրջանավարտների, ովքեր պատրաստակամություն կցուցաբերեն երկու տարի ժամկետով գյուղական բնակավայրերում ստանդնետի սերունդ կրթելու պատասխանատվություն, իսկ դրա համար, ինչպես իրենք են ասում, նախ և առաջ հայրենասիրություն է պետք:

«Ուրիշ ո՞վ, եթե ոչ ես. այս պետք է լինի ընկած կրթական շարժմանը միանալու որոշման հիմքում», - ասել է ծրագրի ղեկավարը: Հարցազրույցի ընթացքում կարևոր է դրսևորվել նաև երկամյա նվիրումով «Դասավանդի, Հայաստան»-ի շրջանակներում:

Ուսանողների հարցերին պատասխանելուց հետո պատասխանատուները տեղեկացրել են «Դասավանդի, Հայաստան»-ին դիմելու կարգը՝ առաջարկելով ծրագրին դիմելու համար այցելել teachforarmania.org կայք և լրացնել առցանց հայտադիմումը:

Հավաքագրման և ընտրության թիմը ներկայացնող երիտասարդները խոսել են նախ հիմնադրամի գործունեության, նպատակների և խնդիրների, ապա

Մ Ե Ծ Ս Ե Ր Թ Ա Տ Ր Ո Ն Ի Հ Ա Ն Դ Ե Պ

Սամվել Վիրաբյանը հայ թատրոնի լավագույն դեմքերից մեկն էր: Իր յուրաքանչյուր կերտած դերում նա ներդնում էր իր հոգին: Երբ բարձրանում էր բեմ, նա այլևս Սամվել Վիրաբյանը չէր, այլ Գիժ Դանը, Բազազ Արտեմը, Նինոսը... Դերասանական խաղը, դերասանական տաղանդը նրա արյան մեջ էին:



Նրա հայրը՝ Միքայել Վիրաբյանը, ծանր մանկություն է ունեցել, որը անցել է Գյումրու ամերիկյան որբանոցներից մեկում: Հենց այդտեղ էլ նա ծանոթացել էր ապագա բանաստեղծ Հովհաննես Շիրազի հետ: Նրանք մանկության ընկերներ էին: Թեև Միքայել Վիրաբյանը զրկանքներով լի մանկություն էր ունեցել, սակայն ոչ մի բան չի խանգարել նրան թատրոն գնալու համար: Այդ մեծ սերը թատրոնի հանդեպ փոխանցվել է իր որդիներից ավագին՝ Սամվել Վիրաբյանին: Բեմը միանգամից սիրեց դերասանին, իսկ դերասանը այդ սիրո փոխարեն իրեն անմնացորդ նվիրեց բեմին: Մայրը դեմ էր, որ իր զավակը դերասան դառնար, քանի որ դերասանի աշխատավարձը շատ ցածր էր, բայց հայրը պնդում էր, որ իր տղան ծնված օրից է դերասան: Սամվել Վիրաբյանը անմնացորդ նվիրումով էր սիրում իր ընտանիքին, կնոջն ու զավակներին: Նրա դուստրը՝ Վարդը, պատմում է, թե ինչպես մի օր, հայրը իրեն ու մյուս զավակներին վերցնում է և գնում են մեծահամերգի, որին նրանք երկար էին սպասել: Բայց երգիչը հարբած էր և հրաժարվում էր երգել: Այդ փաստը շատ էր վշտացրել իրենց, և հայրը տեսնելով դա, մոտենում է այդ երգչին ու ասում,

որ նա այլընտրանք չունի և պետք է այսօր մեծահամերգը կայանա: Մի քանի րոպե անց երգիչն արդեն բեմում էր, Վարդն ու մյուս երեխաները՝ երջանիկ, իսկ Սամվել Վիրաբյանը՝ գոհ, որ կարողացել էր ժպիտ նկարել իր զավակների դեմքին: Սամվել Վիրաբյանը իր բարձրորակ դերասանական խաղով գերել է ոչ միայն Արցախի, այլև Հայաստանի հանդիսատեսին: Նրա լավագույն դերերից են Բարխուդարը («Նամուս»), Գիժ Դանիելը («Չար ոգի»), Վազգենը («Սուրբ Շուշանիկ»), Երվանդ բիծան («Ծովասար»), Նինոսը («Արա Գեղեցիկ»): Նրա վերջին դերը եղել է «Մի՛ վախեցիր» ֆիլմում: Այդ ժամանակ նա հիվանդ էր, այդ իսկ պատճառով նրա մարմնավորած ազատամարտիկի դերը կարճ էր: Սամվել Վիրաբյանը մահացել է 2006 թվականին 56 տարեկան հասակում, սակայն նրա հիշատակը միշտ վառ կմնա հայ հանդիսատեսի սրտում:

Արև ԲԱԲԱՅԱՆ
Լրագրություն, 3-րդ կուրս

ԱրՊՀ ՈՒՍԱՆՈՂՆԵՐՆ ԱՅՅԵԼԵԼ ԵՆ ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏԻ ԵՐԵՒԱՆԵՐԻ ԽՆԱՄՔԻ ԵՎ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԹԻՎ 1 ԳԻՇԵՐՕԹԻՎ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ



ուսանողները կուրսղեկ Ռ.Աղաջանյանի ուղեկցությամբ այցելել են Ստեփանակերտի երեխաների խնամքի և պաշտպանության թիվ 1 գիշերօթիկ հաստատություն:

Օրերս ԱրՊՀ մանկավարժության և սպորտի ֆակուլտետի տարրական կրթություն և մեթոդիկա մասնագիտությամբ սովորող 1-ին կուրսի

Ուսանողները ներկայացել են հատուկ ծրագրերով, որոնց միջոցով երեխաները ավելի անմիջական շփում են հաստատել ուսանողների հետ և ընկերացել:

Այցի նպատակն էր երեխաների առօրյան դարձնել հետաքրքիր և անմոռանալի: Այցելության ընթացքում թե՛ ուսանողները, թե՛ երեխաները գոհունակություն են հայտնել ծրագրից և անհրաժեշտ համարել նման այցելությունները պարբերական և շարունակական դարձնելը:

Վարդուհի ԲԱՂՂԱՍԱՐՅԱՆ,
ՏՄՍ 1-ին կուրս

ՀԱՄԱԱՐՑԱԽՅԱՆ ԽԱՂ-ՄՐՑՈՒՅԹ ՖԻԶԻԿԱՅԻՑ



EPS-ին (European Physical Society) կից ստեղծված «Artsakh Young Minds» թիմը կազմակերպել է համաարցախյան խաղ-մրցույթ ֆիզիկայից՝ բրեյն-ռինգի ձևաչափով, որին մասնակցել են նաև ԱրՊՀ բնագիտա-

կան ֆակուլտետի մի շարք ուսանողներ, ովքեր համդիսանում են նաև «Artsakh Young Minds» թիմի կամավորներ: Այն կազմակերպվել է Ասկերանի շրջանի 10 թիմերի և Շուշիի շրջանի 2 թիմերի միջև, որոնցից մեկական հաղթող թիմեր անց են կացել եզրափակիչ փուլ:

Մրցույթը անց է կացվել նաև Արցախի մյուս շրջանների դպրոցների և Ստեփանակերտի դպրոցների միջև:

Շրջանային փուլերի բոլոր հաղթող թիմերը վերջում հանդիպել են եզրափակիչ փուլում, որը տեղի ունեցավ Ստեփանակերտում:

Մրցույթի ընթացքում հնչել են հետաքրքրաշարժ, տրամաբանական հարցեր ֆիզիկա առարկայից, և այն նպատակ ունի բարձրացնել հետաքրքրվածությունը ֆիզիկա առարկայի նկատմամբ:

Կարինե ԲԱՂՂԱՍՍՐՅԱՆ,
Ֆիզիկա, 3-րդ կուրս

ՈՒՐԱԽ ՈՒ ՏԽՈՒՐ ՄԱՐԴԸ ...

Ֆրունզի մասին մտածելիս հուզմունք են ապրում: Մեծ մարդ, տաղանդավոր դերասան, բարության մարմնավորում: Այն եզակի դերասաններից է, որի խաղը և՛ լիաթոք ծիծաղ է առաջացնում, և՛ հուզում է մինչև սրտի խորքը:



Հայ լեզունը, որը կարողացել է հաղթահարել սեփական վիշտն ու կորուստը և իր արվեստի միջոցով մարդկանց դեմքին ժպիտ նկարել: Նրա մատուցած արվեստը ոգեշնչել է ուղեկցել է մարդկանց բարի գործերի համար:

Նրա ոչ մի ֆիլմ չեն կարող առանձնացնել, բոլորն էլ յուրօրինակ են ու շատ սիրելի, որոնք ամեն անգամ նայելիս ցանկություն է առաջանում կրկին ու կրկին նայել: Ֆրունզի Սկրտչյանը ասել է. «Ես ուզում եմ մարդկանց ժպիտով լուրջ բաներ ասել»: Կարողացել է մարմնավորել զմայելի դերեր արժանանալով մարդկանց դրվատանքին: Նա իր բոլոր դերերը խաղում էր կենդանի, շատ հաճախ դժվարանում էին տարբերել, հոգով -սրտով վերապրում էր այն: Ասում են՝ «Դոմինոյի» նկարահանման ժամանակ Ֆրունզիկ Սկրտչյանը սկսել էր խմել, անգամ պատահել է, որ նկարահանումները ստիպված էին տեղափոխել, որի արդյունքում ռեժիսորը պայման է դրել Ֆրունզիկի առաջ՝ կամ ակկոհիլը կամ դերը: Հետո գրում են, որ մի քանի օր ակկոհիլ չօգտագործելուց հետո նա վերադարձավ և ներկայացրեց լավագույն դրվագը: Նրան պաշտում էին ոչ միայն Հայաստանում, այլև շատ ու շատ այլ երկրներում: Ճակատագիրը Ֆրունզիկին օժտել էր մեծ տաղանդով, և նա ծնողներից գաղտնի գրանցվում է մի փոքրիկ թատերա-

կան խմբակում ու այնտեղ տեսնում, որ միայն երեխաները չեն խաղում, այլ նաև մեծերը:

«Ես մանկություն չեմ ունեցել, մանկապարտեզ չեմ տեսել, բակ չեմ տեսել, ես տեսել եմ միայն թատրոն», - պատմում էր նա: Ծիշտ է, Ֆրունզիկը հիանալի կատակերգական դերեր էր խաղում, բայց միշտ երազում էր, որ իրեն առաջարկեին լուրջ, տխուր ու ողբերգական դերեր: Այդպիսի

դերեր նա քիչ խաղաց, բայց փոխարենը չափազանց տխուր էր նրա կյանքը: Բոլորը սիրում էին Ֆրունզիկին, բայց նրան, ում Ֆրունզն էր սիրում, Ջուլիա անունով մի շատ գեղեցիկ աղջկա, թույլ չտվեցին ամուսնանալ Ֆրունզիկի հետ ու բաժանեցին սիրահարներին: Հետո նա ամուսնացավ, երկու անգամ, բայց երկու ամուսնություններն էլ չերջանկացրին նրան: Նրա աղջիկը՝ Նունեն, տարիներ անց մահացավ ավտովթարից, իսկ փոքրիկ տղան մորից ժառանգած հոգեկան հիվանդություն ուներ: Եվ ծանր ընտանեկան կյանքը այնքան էր մտահոգում Ֆրունզիկին: Ինչ դժվարությունների ասես, որ չի հանդիպել, բայց երբեք չի չարացել: Նրա աչքերը միշտ տխուր էին: Այդպես էլ նրան կոչեցին, ուրախ, տխուր մարդ: Մի՞թե դու լեզունը չես, բոլոր ժամանակների սիրելի Ֆրունզ: Միշտ հիշելու և մեծարելու ենք քեզ, քանզի արժանի ես փառքերի:

Վիկտորյա ԾԱՏՐՅԱՆ,
Լրագրություն, 3-րդ կուրս

ԿԱԶՄԱԿԵՐՊՎԵԼ Է «ՀԱՅԱՏՅԱՑՈՒԹՅՈՒՆԸ ԱԴՐԲԵՋԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԳԱՂԱՓԱՐԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՔՈՒՄ» ԳՐՔԻ ՔՆՆԱՐԿՈՒՄԸ

ԱրՊՀ հայագիտական կենտրոնի ու քաղաքագիտության և փիլիսոփայության ամբիոնի նախաձեռնությամբ կազմակերպվել էր Գառնիկ Դավթյանի «Հայատյացությունը Ադրբեջանի պետական գաղափարախոսության հիմքում» գրքի քննարկումը:

Հեղինակի հետ ծանոթության և գրքի քննարկում կազմակերպելու գաղափարի մասին պատմեց պատմության ամբիոնի դոցենտ, պ.գ.թ. Նելլի Բաղդասարյանը՝ միաժամանակ ողջունելով երիտասարդ հետազոտողի մտահղացումը:

Գրքի հեղինակը, ով ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի հայցորդ է, իր մագիստրոսական թեզի հիման վրա տպագրված մենագրության մասին խոսելիս առաջին հերթին ընդգծում է այն, որ հարևան երկրում հայատյացության դրսևորումներն ինքը ուսումնասիրել և վերհանել է քրեաիրավական տեսանկյունից, որով և պայմանավորված է աշխատանքի արդիականությունը:

«Աշխատությունը նպատակ է հետապնդում հայ-ադրբեջանական հարաբերությունները վերլուծել իրավական ոլորտում»:



հնարավորություն ընծեռելով հետաքրքրվող անձանց լիարժեք պատկերացում կազմելու Ադրբեջանում քարոզվող հայատյացության մակարդակի մասին», - մանրամասնում է հեղինակը:

Գրքի շուրջ ելույթներ և կարծիքներ են հայտնել ինչպես ներկա դասախոսներ, այնպես էլ ուսանողներ, որից հետո հեղինակը առանձին խմբաքանակով գրքեր է նվիրել հայագիտական կենտրոնին, քաղաքագիտության և փիլիսոփայության ամբիոնին:

ԿԱԶՄԱԿԵՐՊՎԵԼ Է ՄԻՋՈՑԱՌՈՒՄ՝ ՆՎԻՐՎԱԾ ՄԱՅՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԵՂԵՑԿՈՒԹՅԱՆ ՏՈՆԻՆ



ցամաք ընթացքում ուսանողները, կարևորելով օրվա խորհուրդը, ասումունքել են, հանդես եկել պարային, երաժշտական կատարումներով:

Ամբիոնի ավագ դասախոս Վեհանուշ Սարգսյանը, շնորհավորելով տոնի առթիվ և արժևորելով կնոջ, մայրերի դերը, իր խոսքում նշել է. «Մորից թանկ աշխարհում ոչինչ չկա: Մեր ժողովրդի ընկալումներում մայրությունը միշտ սրբազան է եղել, և հավատարմությունն այդ ավանդույթներից շարունակվում է առ այսօր»:

ԱրՊՀ բանասիրական ֆակուլտետի ակ. Ս. Աբրահամյանի անվան հայոց լեզվի ամբիոնի նախաձեռնությամբ մանկավարժության և սպորտի ֆակուլտետի տարրական կրթություն և մեթոդիկա մասնագիտությամբ սովորող ուսանողների մասնակցությամբ կազմակերպվել է միջոցառում՝ նվիրված մայրության և գեղեցկության տոնին: Միջո-

ուսանողուհի Սվետլանա Ավանեսյանը, արժևորելով մոր դերը հայ ժողովրդի բազմադարյա պատմության ընթացքում, ասել է, որ հայ մայրը ոչ միայն ծնել, սնել, պահել, պաշտպանել է իր զավակին, այլև սովորեցրել է իր զավակին լինել բարի, անաչառ, ճշմարտախոս և հայրենասեր՝ նախապատրաստելով հանուն ազատագրության պայքարին: